ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԻ ՁԱՅՆԱՎՈՐ ՀՆՉՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ա. Ն. ՀԱՆԵՅԱՆ

Տիգրանակերտի բարբառում առկա են հետևյալ ձայնավոր հնչյունները՝ ա, ա̈, է, օ, ու, ի, ը։

Ա-ն ժամանակակից գրական հայերենի ա *ձայնավորի համեմատությամբ ունի առավել ստորին դիրք՝ մի փոքր շրթնայնացմամբ, որն ընդգծվում է հատկապես* ռ *ձայնորդի հետ ունեցած կապակցություններում՝* -ռա, -առ: *Ա-ն առաջին շարքի ստորին դիրքի ձայնավոր է՝ քմային հնչմամբ։ Մյուս ձայնավորներն իրենց ֆիզիկական հատկանիշներով էական տարբերություններ չունեն ժամանակակից հայերենի համապատասխան ձայնավորներից։*

Նշված հնչյուններն ունե՞ն արդյոք հնչույթային արժեք և համակարգային ինչպիսի՞ հարաբերություններ են երևան բերում։ Ա և Ա հնչյուններից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ միավանկ և բազմավանկ բառերի բոլոր դիրքերում՝ թե՛ փակ, և թե՛ բաց, թե՛ շեշտակիր, և թե՛ շեշտազուրկ վանկերում, թե՛ բնիկ և թե՛ փոխառյալ բառերում. ըստ որում սրանցից առավել հաճախականություն ցուցաբերում է Ա-ն՝ 60%, Ա-ի 40%-ի դիմաց։ Օրինակ՝ ա̈ղ, ալ, մա̈մ, մադ, փէսա̈, հա, ա̈լիր, առնիլ, ձա̈ղիգ, մաձուն, մէռա, ջառ, բանդ, զադ, փէրա̈ն, գանաչ, քուֆթա̈, նաթօռա, օրթալըղ, ղուրաբիա՝ քօշա̈, մաշա և այլն։

Ա-ն և Ա-ն իմաստային հակադրության նվազագույն զույգեր[1] են կազմում մյուս ձայնավորների հետ։ Բերենք օրինակներ Ա-ի համար.

Ա̈ղ (աղ)—օղ
ա̈խդ (հանգույց)—ուխդ (ուխտ)
ա̈վիլ (ավել)—էվիլ (ավելի)
ա̈ձիլ (ածել)—օձիլ (օծել)
ա̈մնիլ (գետեղել)—իմնիլ (լսել)
ա̈գին (ժամանակ)—ուդին (ուտեն)
հա̈րիր (հարյուր)—հօրիր (հորեր)
քա̈նի (քանի)—քէնի (քենի)
խա̈լի (գորգ)—խուլի (խուլի)
բա̈բիդ (հայրիկ)—բիբիգ (բիբ)

ձա̈լլիլ (ծալել)—ձըլլիլ (ծաղկել)
փա̈ն (գործ)—փուն (բույն)
խա̈ղ (երգ)—խիղ (անգամ, հեղ)
թա̈ղ (թաղ)—թօղ (թող)
դա̈ր (տար)—գէր (տեր)
վա̈րթ (վարդ)—վըրթ (որդ)
փա̈նա̈ք (աշխատեցիք)—փա̈նէք (աշխատեցեք)
էրթա̈մ (երթամ)—էրթում (երդում)
ձա̈ղգա̈վ (ծաղկեց)—ձա̈ղգօվ (ծաղկով)

---

[1] *Փոխառյալ բառերի մի մասը նույնպես ընդգրկել ենք նվազագույն զույգերի կազմության մեջ՝ նկատի ունենալով, որ բարբառի տվյալ համաժամանակյա կտրվածքում դրանք ունեն բնիկ բառերին հավասարազոր կիրառություն։*

խաղան (խաղան)—խաղին (երգին)	խաղցա (պարեցի)—խաղցու (պարացրու)
մընանա (մանի)—մընանի (մատանի)	հրմմա (հիմա)—հրմմէ (հրամմե)
էգա (եկա)—էգօ (ե՛կ)	քա (ձայնարկություն)—քու (քո)
	քա —»—»— քի (որ, շաղկապ)

Դիտողություններ՝

ա) Միավանկ բառերի սկզբում ու բառավերջի բաց վանկում ա-ն, նաև բոլոր մյուս ձայնավորները չեն կարող հակադրվել ը ձայնավորին այն պատճառով, որ այդ դիրքերում բարբառը ը չունի։

բ) Բազմավանկ բառերի շեշտված վանկերում բարբառն ը ունի հազվադեպ օրինակներում. դրանք հիմնականում բնաձայնություններ են կամ փոխառյալ բառեր, մի հանգամանք, որը դժվարացնում է այլ ձայնավորների հետ նվազագույն զույգերի կազմումը։ Օրինակ՝ ըմմը՛ն, դըմմը՛ք, զընգը՛նգ, ջըոջը՛ռ և այլն։

գ) Միավանկ բառերի սկզբում չունենք ա←→ի հակադրություն ի-ով սկսվող միավանկ բառերի թվի սահմանափակության պատճառով՝ ինչ, ինք, իր, իմ, ի՛ննէ։

դ) Միավանկ բառերի բառավերջի բաց վանկում ա←→է և ա←→օ հակադրությունների զույգերը բացակայում են է և օ ձայնավորներով ավարտվող միավանկ բառերի գրեթե չգոյության հետևանքով՝ լէ և ձօ (մեկական օրինակ)։

Այսպիսով՝ ա հնչյունը, բառային գրեթե բոլոր դիրքերում հակադրվելով է, օ, ու, ի, ը ձայնավորներին, նրանց նկատմամբ դրսևորում է հնչույթային արժեք։

Ա ձայնավորը ա-ի համեմատությամբ նվազ հաճախականություն ունենալով՝ իմաստային հակադրության սահմանափակ թվով զույգեր է ներկայացնում. դրանք են՝

ալ (ալ, կարմիր)—էլ (օտար)	քանձ (գանձ)—քինձ (գինձ)
ախ (ձայն.)—օխ (ձայն.)	ձառ (ծառ)—ձուռ (ծուռ)
առիր (առել)—ուռիր (ուռել)	մադ (մատ)—մօդ (մոտ)
թառան (թառեցին)—թըռան (թռան)	շառ (փորձանք)—շէռ (մեզ)
	թառ (թառ)—թըռ (թը՛ռ-ձայնարկ.)
էրգանք (երկանք)—էրգինք (երկինք)	
մէռան (մեռան)—մէռուն (մեռոն)	փառցա (բարձեցի)—փառցի (բարձի՛ր)
լէռան (լեռան)—լէռէն (լեռից)	թառավ (թառեց)—թառօվ (թառով)

Ա-ի համար հնչույթաբանական ուժեղ դիրք է շեշտակիր վանկը, հատկապես միավանկ բառերի փակ վանկը, որտեղ նա հակադրվում է մյուս բոլոր ձայնավորներին։

Իսկ ինչպիսի՞ հարաբերություններ գոյություն ունեն ա-ի և ա-ի միջև, արդյոք միմյանցից անկա՞խ հնչույթներ են, թե՞ ոչ։ Հետազոտության ընթացքում երևան եկան բառային այսպիսի զույգեր.

առին (առան)—ա̈րին (արյուն)
վառիլ (վառել)—վա̈րիլ (վռնդել)
ձառիր (ծառեր)—ձա̈րիր (ծարիր)
փէռան (բեռան)—փէրա̈ն (բերան)
փառցիր (բարձել)—փա̈րցիր (բարձեր)
բառաբ (պառավ)—բա̈րա̈բ (պարապ)
շառ (գոտի)—ջա̈ր (ճար)

Հակադրության առաջին եզրում առկա են առ, ռա, *իսկ երկրորդում՝* ա̈ր, րա̈ *կապակցություններ։ Այն հանգամանքը, որ* ռ *ձայնորդի հետ կապակցվում է* ա, *իսկ* ր-*ի հետ՝* ա̈ *ձայնավորը, կարող է հանգեցնել այն եզրակացության, թե այստեղ առկա է գործածության ոլորտների բաշխում* ա-*ի և* ա-*ի միջև, և որ դրանք մեզ ներկայանում են իբրև միևնույն հնչույթի դիրքային տարբերակներ։ Սակայն հարցն այն է, որ Տիգրանակերտի բարբառում* ռ *ձայնորդի առկայությամբ* ա *լինել չի կարող, այլ միայն՝* ա. ա̈ռ, ռա̈ *կապակցությունները բացառված են։ Այնուհետև,* ա-*ի համար դիրքային հատուկ սահմանափակություն չկա, այն կարող է կապակցվել ոչ միայն* ռ-ի. *այլև ուրիշ բաղաձայնների հետ, ինչպես՝ ջաղ, դաք, շադ, մաղ, ձագ, փանցըր, զընդան, հասդ, հայ, մազ, մաձուն, դա՛սսէ, ձաձգիլ, էրգան և այլն։ Փոխառյալ բառերում կարելի է գտնել նաև* ր-*ի հետ կապակցություններ՝ րէմուրադ, դամար, թարխանա, արթուղ, սըրա, թարթալա, ղըննարա, նըղրա, մանղարա և այլն։*

Ա–ի *և* ա-*ի տարբեր հնչույթներ լինելու հարցը վճռվում է իմաստային հակադրության հետևյալ նվազագույն զույգերով։*

Ալ (այլևս)—ալ (կարմիր)
զա̈դ (զատ, եռ)—զադ (ճաշ)
դա̈լ (տալ, ամուսնու քույր)—դալ (ճյուղ)
ա̈մա̈ն (աման)—աման (ձայնարկություն)
գըփա̈նէնք (աշխատում էի)—գըփանէնք (բացում էի)
էրգա̈ն (ամուսնուն)—էրգան (երկար)

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բարբառախոսները երբեք չեն շփոթում ա̈-*ի ու* ա-*ի կիրառությունները, չեն փոխարինում մեկը մյուսով։ Ուրեմն* (Ա)-*ն և* (Ա)-*ն այս բարբառում միմյանցից անկախ հնչույթներ են, որոնց հիմնական տարբերակիչ հատկանիշն է լեզվաշարքի* (ա-*ն՝ ետին,* ա̈-*ն՝ առաջին) տարբերության հետևանքով առաջացած՝ քմայնացածություն* (Ա)*—ոչ քմայնացածություն* (Ա):

Ը *ձայնավորն ունի գործառության հետևյալ սահմանափակումները։ Բարբառում* ը-*ն չի կարող գտնվել՝ միավանկ բառերի սկզբում (ի տարբերություն գրաբարի) և բառավերջի բաց վանկում (ինչպես գրաբարում)։*

Ը-*ն հանդիպում է՝*

ա) միավանկ և բազմավանկ բառերի շեշտակիր վանկում. օրինակ՝ յըղ, վըսբ, վըրթ, վըրփ, վըռ, քընց, վըր, մըժ, խըրս, քըրշ, դըփս, դըմմըք, գըրգըր, զընգզընգ, ջըռջըռ, թըլըմփ և այլն՝ չնչին հաճախականությամբ (3%)։

բ) Նախաշեշտ վանկերում՝ բարձր հաճախականությամբ (95%), օրինակ՝ ըլու, ըսսօր, ըսգէսուր, ընքա̈վուր, ըսսիլ, ըգնիլ, ընգուզ, ըռհա̈թ, փըլ-

յինք, փըրինձ, թըթթու, էրըվնա̈լ, էրգըննա̈լ, դարդըղնիլ, խոսդըգօգիլ, գա̈դ-ըղդիլ, հիվըննա̈լ և այլն։

գ) Շեշտահաջորդ վանկում (մեկուկես վանկանի բառերում), օրինակ՝ քախցըր, թանձըր, միղըր, ա̈սդըղ, սանդըր, թի՛թըվ, ի՛նչխըս, մանդըր և այլն՝ 2% հաճախականությամբ։

Ը-ն իմաստային հակադրության նվազագույն զույգեր կազմում է մյուս ձայնավորների հետ գրեթե բոլոր դիրքերում, բացառությամբ ը-ի համար բացառվող դիրքերի։ Շեշտի տակ՝ բազմավանկ բառերում և շեշտահաջորդ վանկում հանդիպող ը-ն չի հակադրվում այլ ձայնավորների, քանի որ առաջին դեպքում օրինակների թիվը շատ քիչ է, իսկ երկրորդ դեպքում բառավերջի փակ շեշտահաջորդ վանկում մյուս ձայնավորների հանդես գալը բացառված է.

վըրթ (որդ)—վա̈րթ (վարդ)
վըր (որ շաղկապ)—վիր (վեր)
վըր —»—»—»—վօր (դերանուն)
թըռ (ձայն.)—թառ (թառ)
ընի (նա)—էնի (անի)
ընի (նա)—ունի (ունի)
ըսգին (ձգեն)—օսգին (ոսկին)
ըսգին (ձգեն)—ա̈սդին (ազգին)

Ը-ի համար հնչույթաբանական ուժեղ դիրք է բազմավանկ բառերի առաջնավանկը, որտեղ նա հակադրվում է մյուս բոլոր ձայնավորներին։

զըրգիմ (զրկեմ)—զա̈րգիմ (զարկեմ)
գըրիմ (կրեմ)—գօրիմ (կորչեմ)
սըրիմ (սրեմ)—սիրիմ (սիրեմ)
գընիր (տներ)—դէնիր (տանիք)
բըդուգ (պտուկ)—բուգուգ (պուտուկ)
թըռան (թռան)—թառան (թառեցին)

Է ձայնավորը բարբառում գործառում է բառի բոլոր դիրքերում գրեթե առանց բացառության (բառավերջի բաց վանկով միավանկ միայն մեկ բառ կա՝ լէ), օրինակ՝ էր, էշ, փէռ, քէլ, գէս, ա̈նէձք, լէ, լօլէ, հըմմէ, խա̈լէ, ըսսէ՛, էքի, էրա̈զ, էրգինք, փէրա̈ն, թէղին, գէշի, մէյվա̈. ինչպես նաև շեշտահաջորդ վանկում, իբրև որոշյալ հոդ՝ ասդա̈՛ռէ, ա̈րի՛վէ, ա̈սըգնի՛րէ, նաև էական էմ բայի խոնարհված ձևերում՝ հա̈նի՛ր է, հա̈նիր էնք և այլն։

Շեշտի տակ հանդիպող է ձայնավորը նվազ հաճախականություն ունի այն դեպքում, երբ արմատական հնչյուն է (14%—39%-ից)։ Սա բացատրըվում է այն հանգամանքով, որ հին հայերենի ե ձայնավորին բարբառում շեշտի տակ համապատասխանում է ի ձայնավոր։ Մեծ մասամբ շեշտակիր է-ն գործառում է իբրև երկրորդական ձևույթ՝ բայի եզակի հրամայականում և բացառական հոլովում, օրինակ՝ հա̈նէ՛, ըսդըգէ՛, ըսսօրվընէ, քա̈խքեն և այլն։

Շեշտահաջորդ է-ն, որ հանդես է գալիս բարբառում իբրև որոշիչ հոդ, ունի մի փոքր ավելի թույլ, սուղ արտասանություն, քան նախաշեշտ վանկերի է ձայնավորը։ Այն ավելի շուտ մոտենում է միջին շարքի ձայնավորի, քան թե առաջին և բռնում է ը ու է ձայնավորների միջին դիրքը։ Նույնանո՞ւմ է արդյոք այս սուղ է հնչյունը լիահունչ է-ին, թե՞ առանձին մի հնչույթ է։ Կան շեշտված և շեշտահաջորդ է-երի իմաստային հակադրության հետևյալ նվազագույն զույգերը.

գարէ՛ (կարիր)—գա՛րէ (կարը)
վարէ՛ (վոնգիր)—վա՛րէ (ցածը)
քովէ՛ (գովիր)— քո՛վէ (կողքը, մոտը)
քորձէ՛ (գործիր)—քո՛րձէ (գործը)
և այլն։

Այս դիրքում սուղ է ձայնավորը չի կարող հակադրվել այլ ձայնավորների, քանի որ նման դիրքում բարբառն ունի սուղ հնչող միայն մեկ ձայնավոր՝ ի-ն, որը հանդես է գալիս ստացական հոդի առկայությամբ, օրինակ՝ փէրա՛նսի, քուրո՛ւչսի և այլն։ Նշված զույգերում իմաստազատիչ դերը (մեր կարծիքով) պետք է վերագրել շեշտին, իսկ սուղ է ձայնավորը համարել (է) հնչույթի արտասանական և դիրքային տարբերակը։

Ը-ն իմաստային հակադրության նվազագույն զույգեր կազմում է բոլոր ձայնավորների հետ (նախորդ ձայնավորների համար օրինակներ չենք բերում)։

էր (ինչու)—իր
էր—»— օր
էշ—ուշ
էրէդ (երեկ)—էրիդ (ամուսին)
ախփէր (եղբայր)—ախփոր (եղբոր)
ասդրձէն (աստծուց)—ասդրձուն (աստծուն)
փէռ (բեռ)—փուռ (բուռ)
քէր (գեր)—քիր (գիր)
շէռ (մեզ)—շօռ (աղի)
ձախէ՛ (ծախիր)—ձախու (ծախու)
ա՛ձրլէ՛ (ածիլիր)—ա՛ձրլի (ածելի)
լոլէ (նոր տարի)—լոլօ (փչոց)
քէղիր (գյուղեր)—քողիր (գողեր)
ցէնի (ձայնի)— ցունի (ձյան)

Այսպիսով բարբառն ունի (է) հնչույթ՝ արտասանական ու դիրքային մեկ տարբերակով։

Ի ձայնավորը ընդգրկում է գործառության հետևյալ ոլորտները.

ա) շեշտակիր վանկը՝ բարձր հաճախականությամբ (56%), օրինակ՝ ինչ, իմ, իննէ, խիլք, գիզդ, հին, ա՛ղիր, ա՛միս, ա՛սիղ, մի, քի, ա՛ղի, լէղի, քինի։ Այս դիրքում ի-ն համապատասխանում է նաև հին հայերենի ե ձայնավորին և իւ երկբարբառին։

բ) Նախաշեշտ վանկը՝ համեմատաբար նվազ հաճախականությամբ (28%), օրինակ՝ իրգուն, իրա՛նք, իրիցգին, հիվա՛նդ, սիրիլ, հիյյա՛լ և այլն։

գ) Շեշտահաջորդ վանկը (16% հաճախականությամբ), որտեղ ի-ն հանդես է գալիս իբրև ստացական ս, դ հոդերին նախադաս (փակ վանկում) կամ վերջադաս (բաց վանկում) հավելադիր հենարան, օրինակ՝ սի՛րդիս կամ սի՛րդսի, դո՛ւնիթ կամ դո՛ւնթի (սիրտս, տունդ)։ Այս նույն ի-ն ավելանում է նաև ստացական հոդով հոլովվող բառերի թեք հոլովաձևերի վրա, օրինակ՝ ուղղ. սի՛րդսի, տր. սըրդի՛սի, բաց. սըրդէ՛սի, գործ. սըրդո՛վսի։

Ի-ն բարբառում ունի դիրքային որոշ սահմանափակումներ.

ա) Ի-ն չի կարող նախորդել ռ ձայնորդին (իռ կապակցությունը բացառված է)։ Այդ պատճառով է, որ հին հայերենի ե ձայնավորը, որին շեշտի տակ բարբառում ի է համապատասխանում, ռ-ից առաջ անփոփոխ է մնում. օրինակ՝ ցէռք, սիսէռ, լէռ, փէռ, ցրմէռ։

բ) բառասկզբում ի-ն չի կարող հաջորդել յ ձայնորդին։ Հին հայերենի ի-ով սկսվող միավանկ բառերում ե-ն չի հնչյունափոխվել, քանի որ ունեցել է յէ հնչում (ըստ երևույթին, շատ վաղուց), և նախահունչ յ-ն խանգարիչ գոր-

ծոն է եղել ե>ի օրինաչափ հնչյունափոխության համար։ Ինչպես, օրինակ՝ եմ բայի իմ, իս (եմ, ես) ձևերը, որոնցում ե-ն հնչվել է իբրև մաքուր է ձայնավոր, ենթարկվել են հնչյունափոխության, իսկ յէս (ես), յեղ (եղն), յէր (երբ), յէփ (եփ), յէրք (երգ) բառերում ե>ի անցում տեղի չի ունեցել յ-ի առկայության պատճառով։ Ի-ն իբրև ինքնուրույն հնչույթ հակադրվում է բոլոր մյուս ձայնավորներին գրեթե բոլոր դիրքերում. կրկնությունից խուսափելու համար բերում ենք միայն ի←→ու, ի←→ օ հակադրությունների ղույգերը։

ինք (ինքը)—ունք (հոնք)
իր (իր)—օր
փարիվ (բարև)—փարօվ (բարով)
հոքքի՛սի (հոգիս)—հօքքո՛սի (հոգուս)
փոշի (մոխիր)—փոշու (մոխրի)
դանի (տանի)—Դանօ (Դանիել)
հին—(այնտեղ)
խիղ (անգամ)—խուղ (հող)
իգան (տան)—օդան (ոտքի)
իշնա (իշնի)—ուշնա (բալ)
բիյին (պահեն)—բօյին (հասակին)

Շեշտահաջորդ դիրքում ի-ն ոչ մի ուրիշ ձայնավորի չի հակադրվում, քանի որ ստացական հողի առկայությամբ միայն ինքը կարող է հանդես գալ. Այս ի-ն առավել ուշ է արտասանվում, քան նախաշեշտ վանկերի ի-ն և ունի միշին բարձրացում։ Այն (ի) հնչույթի արտասանական և դիրքային մի տարբերակն է։

Օ ձայնավորը բարբառում կարող է լինել բառի բոլոր դիրքերում.

ա) Շեշտի տակ՝ 35% հաճախականությամբ—օց, օղ, օր, մօդ, քօրձ, ձօվ, սօլ, ձօ (կոչական), խելօք, ըսսօր, շըբթօր, գըսսօր, մըգլօր, փէդօվ, ունքօվ, ասդղօվ, ուղօղ, դրվօղ, Գիդօ, Սէփօ, Լուսօ, էգօ՛, աղղօ, յամմօ (կոչական)։

Շեշտակիր դիրքում օ-ի ցածր հաճախականությունը բացատրվում է նրանով, որ միայն սակավաթիվ բառեր ունեն արմատական օ հնչյուն. այն առավել չափով հանդիպում է գործիական հոլովի օվ և ենթակայական դերբայի օղ ձևույթներում, քանի որ հին հայերենի ռ ձայնավորին բարբառում շեշտի տակ համապատասխանում է ու ձայնավոր։

բ) Նախաշեշտ վանկերում՝ 65% հաճախականությամբ՝ օլըրվիլ, օսգի. օսգուռ, օղօրմի, օդա, փօբիգ, քօվիլ, թօնիր, խօնջան, չօրութին, մըրօդիլ. ժանգօդիլ, խօջա, չօբան և այլն։

Օ-ն նույնպես անկախ հնչույթ է, քանի որ բոլոր մյուս ձայնավորներին հնարավոր դիրքերում հակադրվում է։ Օրինակներ ենք բերում միայն օ←→ ժանգօդիլ, խօջա, չօբան և այլն։

դօն (տոն)—դուն (տուն)
թօփ (գնդակ)—թուփ (խաղողի տերև)
բօղ (բանջար)—բուղ (գոլորշի)
ըսսօր (այսօր)—ըսուր (սրա)
Լուսօ (անուն)—լուսու (լույսի)
ղօղի (բանջարի)—ղուղի (գոլորշու)

Ու ձայնավորը հանդիպում է.

ա) շեշտակիր վանկում՝ բարձր հաճախականությամբ (75%), քանի որ հին հայերենի շեշտակիր ռ ձայնավորը և ոյ երկբարբառը այս դիրքում փոխարինված են ու-ով։ Օրինակ.— ուշ, ունք, ո՛ւթթէ, ուխդ, ուժ, թուք, ձունգ, շուն, դուն, փուս, խուդ, բուղ, ղում, քու, ամունդ, արցունք, արնուդ, հալվուր,

խավուղ, օղուլ, բիթում, թըթթու, լէզու, անձրէվու, ուդէլու, լուսու, արմունգնըրու, ադցո՛ւ, գաքցո՛ւ և այլն։

Ու-ով սկսվող միավանկ բառերը փոքրաթիվ են, որովհետև հին հայերենի ու-*ով սկսվող միավանկ բառերից քչերն են ավանդված բարբառում։ Բառավերջի բաց վանկում* ու-*ն ներկայանում է կամ իբրև արմատական հնչյուն. կամ էլ (մեծ մասամբ) իբրև երկրորդական ձևույթ՝ եղակի ու հոգնակի տրականում (լուսու, դընէրու) և պատճառական բայերի եղակի հրամայականում (խաղցո՛ւ, ղաքցո՛ւ)։*

բ) Նախաշեշտ վանկերում՝ 25% հաճախականությամբ, ուրիշ, ուշիդ, ունիմ, ուրփաթ, ուսդուրա, ուվազ, փուլվառ, լուսընգա, սըրփութին, չըրուգշաբթի, քուշա, դուքան և այլն։ Այս դիրքում ու-ի նվազ հաճախականությունը պայմանավորված է շեշտի հետ կապված հնչյունափոխության հարցերով։

Ու-ի համար բացառված դիրքեր են.

ա) վ-ին հաջորդող դիրքը միավանկ բառերի սկզբում. վու *կապակցությունը բացառված է (միայն բառասկզբում)։*

Հին հայերենի ո-*ով սկսվող միավանկ բառերում* ո *ձայնավորը չի հնչյունափոխվել* ու-*ի այն պատճառով, որ* ո-*ից առաջ արտասանվել է նախահունչ* վ: *Սրանցում* ո-*ն, տեղաշարժվելով,* վ-*ի արգելակմամբ կանգ է առել և ընտրել միջին գիրք՝* ը—*օրին. վըսբ (ոսպ), վըրփ (որբ), վըրթ (որդ), իսկ վօվ (ով), վօր (որ) բառերում* ո-*ն բոլորովին չի տեղաշարժվել։ Չնայած այս օրինաչափությանը, բարբառը գործածում է* վուշշ *ձայնարկությունը, սակայն այն ունի նաև* բուշշ *և* վըշշ *տարբերակները (նույնիմաստ)։*

բ) Ու-ն չի կարող նախորդել վ-ին բառավերջում։ Այդ են վկայում ձօվ, գօվ, քօվ, հօվ, վօվ միավանկ բառերը, որոնցում սպասելի էր ու՝ օ-*ի փոխարեն, հմմտ. խուդ (խոտ), խուզ (խոզ) և այլն և գործիական հոլովի* օվ *վերջավորությունը, որը նույնպես սպասելի էր* ուվ *հնչմամբ։*

Այս բացառյալ կապակցությունները՝ վու, ուվ *(ինչպես նաև* յի*), խոսում են* ու *և* վ, ի *և* յ *հնչույթների նախնական առնչակցությունների մասին և բարբառում արտացոլում են նրանց նախկին փոխհարաբերությունների հետքերը*[3]*։*

Ու-ն իբրև ինքնուրույն հնչույթ հնարավոր դիրքերում հակադրվում է մյուս ձայնավորներին։ Նվազագույն զույգեր արդեն բերել ենք նախորդ էջերում։

Այսպիսով՝ ամփոփելով հետազոտության արդյունքները՝ գտնում ենք, որ Տիգրանակերտի բարբառում առկա են հետևյալ ձայնավոր հնչույթները.

(Ա), (Ա), (Ը), (Է) է *սուղ տարբերակով,* (Ի) ի *սուղ տարբերակով,* (0). (Ու)—*ընդամենը յոթ ձայնավոր հնչույթ։*

Աղյուսակներ

Ձայնավորների միջին հաճախականությունը

Ձայնավորներ	Նախաշեշտ վանկ	շեշտակիր վանկ	շեշտահաջորդ վանկ
Ա	43 %	57 %	—
Ա	54 %	46 %	—
Ը	95 %	3 %	2 %
Է	31 %	39 %	30 %
Ի	28 %	56 %	16 %
0	65 %	35 %	—
Ու	25 %	75 %	—

2 Տե՛ս Է դ. Ա ղ ա յ ա ն, Գրաբարի քերականություն, Երևան, 1962։

Ձայնավորների դասակարգումը

Շարքեր		Առաջին շարք	Միջին շարք	Ետին շարք
բարձրացում	Վերին	Ի	—	Ու
	Միջին	Է	Ը	Օ
	Ստորին	Ա	—	Ա

СИСТЕМА ГЛАСНЫХ ФОНЕМ ТИГРАНАКЕРТСКОГО ДИАЛЕКТА

А. Н. ГАНЕЯН

Резюме

Тигранакертский диалект принадлежит к западной ветви диалектов армянского языка. Диалект имеет следующие гласные фонемы: (Ա̈), (Ա), (Ը), (Է), (Ի), (Օ), (Ու), которые были определены методом выявления минимальных фонологических пар. В статье приведены их позиционные варианты, дистрибуция и частотность, а в приложении—таблицы классификации и средней частности гласных фонем.